



ԻՆՉ ԴԻՏԻ ՈՒՏԵՆՔ ԵՒ ... ԻՆՉՈՒՄ

... ԲԱՅՑ ՉԱԾԱԽՈՐ

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2 **Պատգամաւորական ժողովի առաջին նիստերը նոր տարում**
- 3 **Ստացած գրքեր**
- 4 **«Մի ամուսնալուծութիւն» իրանական ֆիլմը շահել է «Գոլդըն Գլոբ» մրցանակը Ռ.Ս.**
- 6 **Ինչու չենք օգտագործում մուսուլման ներուժը Վահրամ Աղաջանեան**
- 14 **«Փարիզեան սուրճ»-ը գոհ է գնում քաղաքապետարանի կամքին Գայիանէ Աբրահամեան**
- 14 **Հարցազրոյց «Փարիզեան սուրճ»-ի սեփականատիրոջ հետ Տորք Դալալեան**
- 17 **Ինչպէս է հոսում կապիտալը Լուսինէ Բարսեղեան**
- 18 **Ժայռապատկերներ Գրիգոր Կարախանեան**
- 20 **Լորեթա Լաքսի չափահաս մանուկները**
- 22 **Խոհանոց**
- 23 **Տնտեսուհու անկիւն**
- 24 **Մարզանք Արման Տէր Ստեփանեան**



Մշակութային եւ Հասարակական

Երկշաբաթաբեր

Ե արի, քի115, Յունար 25, 2012,
1200 քուման
Հայաստանում 320 դրամ



- 8 **Ի՞նչ պիտի ուտենք ... ինչո՞ւ**
Դոկտ. Մեհմէթ Օզ
Վերջ հեքիաթների
Վերջ մոդաներին
- 10 **Մտեցումների պատմութիւն**

Պ ա ր ս կ ե ր է ն ք ա ժ ի ն

- | | | |
|--|---|---|
| <p>2 Այս համարի հայերէն էջերում</p> <p>4 Իրանի փոքրամասնութիւնների արտագաղթը եւ մշակութային զանազանութեան ոչնչացման վտանգը</p> | <p>6</p> <p>Ռոբերթ Սաֆարեան</p> <p>Գիրք` Հրեաները եւ հայերը Իրանի ազգային խորհրդարանի (երկրորդ մինչեւ հինգերորդ շրջանների) փաստաթղթերում Անահիտ Խազիր</p> | <p>8 Հայ ժամանակակից նկարիչներ` Մարտիրոս Սարեան</p> <p>11 «Փայտ» արմատը հայերէնում եւ իրանական լեզուներում Էդիկ Մեհրաբեան</p> |
|--|---|---|

Յոյս

Հասարակական-մշակութային երկշաբաթաբեր

Արտոնատէր՝
Լեւոն Ահարոնեան

Խմբագիր՝
Ռոբերթ Սաֆարեան

Խմբագրական կազմ՝

Քարմէն Ազարեան,
Լիա Խաչիկեան,
Գարուն Սարգսեան,
Արմինէ Մելիք-Իսրայելեան

Գեղարւեստական ձեւաւորում՝
Լիա Խաչիկեան

Հայերէն բաժնի սրբագրիչ՝
Քարմէն Ազարեան

Կայք
Քաջիկ Սաֆարեան

Մարզական
Արման Տէր Ստեփանեան

Բաժանորդագրութիւն
Քարին Եաղուբի

Հասցէ՝

Թեհրան, Էնդելար պողոտայ,
Վալի Ասր քառուղի
համար 1048
66495180 66492693

Հեռախօս-հեռապատճեն՝
66495208

hooyes@inbox.com
www.hooyes.com

Յունևարի 17-18-ին կայացան ԹՀԹ պատգամաւորական ժողովի երկու նիստ, ուր քննարկեցին համայնքի մի շարք կարեւոր հարցեր: Ստորև «Համայնք» կայքից մէջբերում ենք »Թունեան« դպրոցի շինարարութեան վերաբերող հաւանական նիւթական չարաշահութեան մասին ժողովում անցած-դարձածի զեկուցումը:

ՊԺ-Ի ԴԻՒԱՆԸ ԼՐԶՕՐԷՆ ՇԵՏԱՍՈՒՏ Է «ԹՈՒՆԵԱՆ» ԴԴՐՈՅԻ ՆԻԻԹԱԿԱՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԻ շԱՐՅԻ ԼՈՒԾՄԱՆԸ

Պատգամաւորական ժողովի 14-րդ գումարման Յունևարի 18-ի 31-րդ նիստի ժամանակ Դիւանը ներկայացրեց «Թունեան» դպրոցի նիւթական չարաշահումների վերաբերեալ իր ստանձնած պարտականութիւնների կատարման մասին զեկույցը: Այս զեկույցի կարեւոր մասերը ներկայացնում ենք մեր ընթերցողների ուշադրութեանը:

Սեպտեմբերի 29-ին դիւանը մի ցամակ էր յղել շինարարութեան նախկին նախագահ պրն. Ժիրայր Նազարեանին՝ հրաւիրելով նրան ներկայացնելու իր հիմնաւորումները՝ Պատգամաւորական ժողովում հաշիւեքննիչ մարմնին ներկայացրած «Թունեան» դպրոցի քանդման աշխատանքների ընթացքում ծագած հարցերի վերաբերեալ: Այդ հանդիպումը պրն. Ժիրայր Նազարեանի հետ պէտք է տեղի ունենար Յոկտեմբերի 4-ին, Ազգային Առաջնորդարանում: Հանդիպմանը պէտք է ներկայ լինէին Թեմական Խորհրդի, Պատգամաւորական ժողովի եւ հաշիւեքննիչ մարմնի ներկայացուցիչները: Սակայն պրն. Ժիրայր Նազարեանը տեղեկացրել էր, որ ճամբորդութեան մեկնելու պատճառով չի կարող ներկայ գտնել ժողովին եւ ակելի ուշ գրաւոր ծեւով կը ներկայացնի իր բացատրութիւնը: Դիւանն, այնուամենայնիւ, խնդրեց, որ նա իր բացատրութիւնը ներկայացնի Առաջնորդարանի գրասենեակ, իսկ ճամբորդութիւնից վերադառնալուց յետոյ մասնակցի դեմառդէմ հանդիպմանը, որը կազմակերպելու է Դիւանը:

Պրն. Ժիրայր Նազարեանը հա-

մառօտ ներկայացրել էր երկէջանոց զեկույց, սակայն հաշիւեքննիչ մարմինը եւ ժողովը եզրակացրեց, որ այդ զեկույցում որեւէ լուրջ հիմնաւորում չի տրուում եւ, ընդհանրապէս, չեն շօշափուում այն հարցերը, որոնք ներկայացւել են հաշիւեքննիչ մարմնի զեկույցի մէջ:

Այնուհետեւ Յոկտեմբերի 6-ին, ՊԺ-ի Դիւանը երկրորդ ցամակն է գրում պրն Նազարեանին, որտեղ նշում էր. «Ցաւօք Ձեր ներկայացրած բացատրութիւնները բաւարարութիւն չպատճառեցին եւ հանդիպումը ակարտեց հետեւեալ եզրակացութեամբ՝ Հաշիւեքննիչ մարմնի զեկուցման մէջ նշած մօտ 403 միլիոն ռիալ անընդունելի ծախսած գումարների համար պէտք է ներկայացւեն համոզիչ փաստաթղթեր, հակառակ դէպքում այդ գումարը պէտք է վերադարձի Ազգային Առաջնորդարանի սնդուկ: Նկատի ունենալով, որ Շինարարական մարմինը Դուք էք ղեկավարել, վերջին անգամ հնարաւորութիւն է տրուում Ձեզ ամենաուշը մինչեւ Յոկտեմբերի 21-ը անձամբ ներկայանալ Ազգային Առաջնորդարան՝ Ձեր հիմնաւորումները ներկայացնելու համար»:

Դիւանը նշել էր նաեւ, որ հակառակ դէպքում այս հարցը յանձնելու է Թեմական Խորհրդին՝ երկրի արդարադատութեան խողովակներով հարցը հետաքննելու համար:

Յոկտեմբերի 18-ին պրն. Ժիրայր Նազարեանը ակելի ծաւալում մի գրութիւն է յղում Դիւանին, որով փորձում էր հաշիւեքննիչ մարմնի զեկույցի հարցերին կէ-

տառկէտ անդրադառնալ: Այդ գրութիւնը ուսումնասիրել է խորհրդակցական հանդիպման ժամանակ հաշիւեքննիչ մարմնի հետ եւ տրել է եզրակացութիւն այն մասին, որ պրն. Ժիրայր Նազարեանի բացատրութիւնները համոզիչ չեն:

Այս ամենից յետոյ, եթէ հարցը չլուծի դրականօրէն, ապա այն դատարանի միջոցով լուծում կը ստանայ: Խորհրդակցական հանդիպման ժամանակ որոշեց նախքան դատարան դիմելը միջնորդների միջոցով փորձել եւս մէկ անգամ ուղիներ փնտրել հարցի արդար լուծման համար:

Միջնորդութեան առաջին փորձը ձախողեց, որովհետեւ պրն. Նազարեանը պնդում էր, որ իր վերջին խօսքն ասել է եւ ակելացնելու որեւէ բան չունի այլեւս:

Արդէն դիւանը պարտադրւած էր ուրիշ քայլի դիմելու: Սա աննախադէպ քայլ էր մեր կառոյցի մէջ եւ Դիւանը դժւար կացութեան մէջ էր յայտնել: Խորհրդակցութեան առումով ազգային տարբեր դեմքերի հետ հանդիպումներ եղան, որոնց արդիւնքում Դիւանը որդեգրեց հետեւեալ ուղին՝ Իրանում պետական դատարանից բացի գոյութիւն ունի «Շորայէ Հալ Էխթելաֆ» (Տարածայնութիւնների լուծման խորհուրդ): Այստեղ նախքան դատական ատեանին դիմելը մարդիկ դիմում են այդ խորհրդին եւ ներկայացնում իրենց բոլոր տւեալներն ու փաստաթղթերը: Նրանք մասնագիտօրէն ուսումնասիրում են հարցը եւ դիմողին տեղեկացնում, թէ դատարանում յաջողութեան ինչ հաւանականու-

ՄՏԱՅԱՅ ԳՐՔԵՐ



ՆՈՐ ՕՐ Է Կամքի ուժը սահման չունի IT'S A NEW DAY Will Power Has No Boundaries

Վերջերս լոյս է տեսել Մարինե Ասատրեանի գրչին պատկանող «Նոր օր է/ Կամքի ուժը սահման չունի» գիրքը՝ կցած անգլերեն օրինակով՝ Արմինե Մինասեանի քարգմանութեամբ: Ինքնակեն-

թիւն կայ: Այս ծելով քիչ գունարներ ծախսելով հնարաւոր է հարցը լուծել: Այդ խորհրդի մասնագէտն այցելելով եւ ուսումնասիրելով շէնքը, կասի թէ պետական հաշւարկներով այդ շէնքի քանդման աշխատանքը ինչքան գումար կը պահանջէր: Դիւանը դիմել է այս քայլին եւ յուսով է, որ նրանց եզրակացութիւնը ճիշտ կը լինի: Հաշւապահական փաստաթղթերը նաեւ ներկայացուելու են մասնագէտների, որպէսզի նրանց եզրակացութիւնը եւս ունենայ:

Դիւանը երկխօսութեան հնարաւորութիւնը դեռ օգտագործում է, եւ նոր ձեռքբերում ունեցաւ: Այս երկխօսութեան մոդելը կոչւում է «Իրաւարարութիւն կամ դատողութիւն»: Դա պետական կառոյց

սագրական այս պատմածքներում հեղինակը, որը Սպիտակի 1988 թականի աւերիչ երկրաշարժի հետեւանքով գամել է անլասայլակին, պատկերում է աղետալի այդ օրերը, եւ այնուհետեւ խեղանդամ դարձած մարդու դժւարին կեանքը, բայց եւ միաժամանակ մաքառումն ու պայքարը, ապրելու եւ յաղթանակ տանելու մեծ ձգտումն ու լաւատեսութիւնը:

1928-2011-ԱՄԵԱԿ 1991-ՓԵՐԻՈՅ ԿՐԹԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԵԱԿ

2011 թականին Թեհրանում լոյս տեսաւ Փերիոյ Կրթասիրաց Միութեան Ն.Ջուղայի մասնաճիւղի 83-ամեակին, իսկ Թեհրանի մասնաճիւղի 20-ամեակին նւիրած՝ Գասպար Ամիրխանեանի գրչին պատկանող գիրքը՝ պրն.Արտուշ Պօղոսեանի մեկենասութեամբ:

Գրքի առաջին էջերում գետեղած են սոյն միութեան գործունէութիւնը գնահատող ուղերձներ, որից յետոյ մանրամասնօրէն անդրադարձել է երկու մասնաճիւղերի

չէ, սակայն պայմանագիր է գրելու կողմերի միջեւ, որը դատական որոշման արժէք ունի: Երկու կողմերն են՝ պրն ժիրայր Նազարեանը եւ Թեմական Խորհուրդը՝ որպէս ԹՀԹ-ի պաշտօնական գործադիր մարմին: Երկու կողմերի համաձայնութեամբ ընտրելու է մի «Իրաւարար»:

Երկխօսութեան մէկ այլ ձեւ է այն, որ իւրաքանչիւր կողմ կարող է իր իրաւարարը ունենալ, եւ այդ երկու իրաւարարները խորիրոպակցաբար ընտրելու են մէկ ուրիշ իրաւարարի, որը կոչուելու է գլխաւոր իրաւարար եւ նրա խօսքը վերջնական է լինելու երկու կողմերի համար:

Այս եղանակին համաձայնել է պրն Նազարեանը: Այս եղանակով



հիմնադրման պատմական հանգամանքներին ու նշանաւոր անձանց, նրանց ծաւալած ազգային-հասարակական եւ բարեգործական աշխատանքներին ինչպէս եւ զանազան ձեռնարկներին: Գիրքը յատկապէս կարեւորում է այն առումով, որ արձանագրում է իրանահայ համայնքի պատմութեան մի հատուածը՝ Փերիոյ կրթասիրաց միութեան շրջանակում:

հնարաւոր կը լինի առանց պետական դատարանի լուծել հարցը: Իսկ մինչ այդ կը տրւեն մասնագէտների եզրակացութիւնները հարցի կապակցութեամբ:

Սա անմախաղէպ երեւոյթ է Ազգային կառոյցում: Պատգամաւորները Դիւանի զեկոյցը լսելուց յետոյ մի շարք հարցեր ուղղեցին Դիւանին: Նրանք բարձր գնահատեցին դիւանի կատարած աշխատանքներն այս կապակցութեամբ եւ յոյս յայտնեցին, որ բարեյաջող ընթացք կունենան դրանք:

Դիւանը աշխատանքի վերջնական արդիւնքը կը ներկայացնի Պատգամաւորական ժողովին:

Աղբիւր՝ www.hamaynk.com

ԻՐԱՆԱԿԱՆ ՖԻԼՄԸ ՇԱՀԵԼ Է ԳՈՒԴԸՆ ԳԼՈՒ ՄՐՅԱՆԱԿԸ

«ՆԱԳԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՄԻՄԻՆԻՉ» ՖԻԼՄԻ ՄԻԶԱՉԳԱՅԻՆ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՐՉԱԳԱՆՔԸ ԻՐԱՆՈՒՄ



Անցեալ շաբաթ Ասղար Ֆարհադիի «Մի ամուսնալուծութիւն» իրանական ֆիլմը շահեց Գոլդըն Գլոբ (Ոսկէ երկրագունդ) մրցանակը՝ որպէս տարւայ լաւագոյն օտարալեզու ֆիլմ եւ մեծ ոգեւորութիւն ու ցնծութիւն առաջացրեց իրանցիների, մասնաւորաբար երկրի մտաւորական ու արւեստասէր խաւի, եւ յատկապէս իրանական կինոյի գործիչների մօտ: Գոլդըն Գլոբը պարգեւում են Զոլիվուդում հաստատուած միջազգային մանուկի ներկայացուցիչները եւ այն մեծ ազդեցութիւն ունի յառաջիկայ Օսկար մրցանակում քւէարկող ամերիկեան կինո-

արդիւնաբերութեան գործիչների վրայ: Երբ մի ֆիլմ շահում է Գոլդըն Գլոբը, դրա շանսը Օսկարը ձեռք բերելու համար աչքառու կերպով մեծանում է: Իսկ բոլորս գիտենք, թէ Օսկարը ինչ կարելորդեր է խաղում մի ֆիլմի միջազգային վաճառքի եւ դրա ռեժիսորի համաշխարհային ճանաչման հարցում:

Ասղար Ֆարհադին եւ «Նաղերի բաժանումը Սիմինից»

«Նաղերի բաժանումը Սիմինից». այսպէս է կոչւում Ասղար Ֆարհադիի ֆիլմը, որը «Մի բա-

ժանում» կամ «Մի ամուսնալուծութիւն» անունով (A Separation) սկսած անցեալ տարի Ֆաջր կինո-փառատօնից, մէկը միւսի ետեւից հմծում է աշխարհի գանազան, այդ թւում Բեռլինի Ոսկէ Արջ հեղինակաւոր մրցանակը: Ֆարհադին պատկանում է իրանական կինոյի համեմատաբար երիտասարդ սերնդին: Նա ծնել է 1972 թւականին Թեհրանում: «Նաղերի բաժանումը Սիմինից» ֆիլմը նրա հինգերորդ երկարամետրաժ գործն է: Նրա առաջին ֆիլմը «Պար փոշիներում» (2003) ընդունեց որպէս խոստումնալի երիտասարդ ռեժիսորի կարելոր



գործ: Դրան հետեւեցին «Գեղեցիկ քաղաքը» (2004), «Չարշանբէ սուրի» (2006), «Էլիի մասին» (2009) ֆիլմերը, որոնք բոլորն էլ լաւ ընդունւեցին եւ բարձր գնահատւեցին թէ՛ Իրանում եւ թէ՛ արտասահմանում: «Էլիի մասին» ֆիլմը անլանի կինօ-տեսաբան Դէյվիդ Բորդուելի կողմից գլուխ գործոց համարեց, իսկ «Մի բաժանումը» ամերիկացի հռչակաւոր ֆիլմ-քննադատ Ռաջեր Էբերթը համարեց տարւայ լաւագոյն ֆիլմը:

Գոլդըն Գլոբի յաղթանակի արձագանքը Իրանում

«Մի ամուսնալուծութիւն»-ը ուղղակի քաղաքական թեմա չունի, այլ պատկերում է հասարակական եւ մշակութային առումով իրանական պառակտւած հասարակութեան վիճակը: Այն սկզբից աւելի դուր եկաւ միջին դասակարգին եւ երիտասարդութեանը,



իսկ վերջերս, երբ Իրանի կինօ-աշխատողների արհմիութիւնների կենտրոնը՝ «Սինեմայի Տունը» լուծարեց երկրի մշակոյթի նախարարութեան կողմից, ֆիլմի յաջողութիւնը դարձաւ Իրանի կինօ-գործիչների համախմբման եւ բողոքի առիթ: Սոցցանցերը իրանցիների կողմից ողողւեցին Ֆար-

հադիին եւ նրա ֆիլմը գովաբանող գնահատականներով եւ այնպիսի կրքով ու խանդավառութեամբ, որ դժւար հնարաւոր էր քննադատական որեւէ մօտեցում ֆիլմին կամ Գոլդըն Գլոբի մրցանակի արժեքին:

Ռ.Ս.

ԻՆՉՈ՛Ւ ԶԵՆՔ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ՄՈՒՍՈՒՄԱՆ ՆԵՐՈՒԺԸ

Վահրամ Աղաջանեան
«Երրորդ Ուժ» թերթի գլխավոր խմբագիր



Տեսարան Բէյրութի Բուրջ Համուդ քաղամասից

Մեզանում տարածւած է այն թիր կարծիքը, թէ հայ ժողովրդի բոլոր դժբախտութիւնների աղբիւրը մահմեդականութիւնն է՝ իր ռազմատենչ գաղափարախօսութեամբ ու աշխարհակալմամբ, քրիստոնեայ ժողովուրդների հանդէպ պատմական չթաքնւած անհամդութիւնով և անուշաբանութեամբ: Հայրենական որոշ հրապարակախօսներ իրենց բնորոշ կրքոտութեամբ սիրում են «մերկացնել» իսլամի կամ պանիսլամականութեան հայակործան վտանգաւոր էութիւնը՝ պահ անգամ չմտածելով, որ դրանով միայն նպաստում են մահմեդական երկրներում ազերի էմիսարների հակահայկական քարոզչութեանը եւ որպէս հետեւանք՝ հակահայկական տրամադրութիւնների աշխուժացմանը: Մինչդէռ 1915 թ. նաեւ արաբ մահմեդականներն են հազարաւոր հայերի կեանք փրկել: Չլինէր Իրանի բարիդրացիական կեցածքը հայ ժողովրդի նկատմամբ, շրջափակւած Հայաստանն ու Ղարաբաղը կը յայտնէին տնտեսական անհամեմատ ծանր վի-

ճակում:

Տասնեակ հազարաւոր հայեր այսօր էլ բնակւում են արաբական եւ միջինասիական տարբեր երկրներում, որտեղ, հաւաստի աղբիւրների համաձայն, գոյութիւն ունեն ՅՅ-ի հետ սերտ համագործակցութեան պատրաստ հակաթուրքական բաւական ազդեցիկ ուժեր: Զօգտւել դրանից՝ նշանակւում է չտեսնել կամ մոռանալ սեփական շահը:

Գաղտնիք չէ, որ պատմական հանգամանքների բերումով բազմաթիւ հայեր, հաշւեյարդարից փրկւելու յոյսով, դարասկզբին մահմեդականութիւն են ընդունել՝ պահպանելով, սակայն, ազգային աննդոյթները: Իսլամ ընդունած հայազգի հազարաւոր քաղաքացիներ ներկայումս բնակւում են Թուրքիայում, Հիւսիսային Կովկասում: Չնայած շարիաթի օրէնքների խստութեանը՝ հաւատափոխ հայերին բնորոշ է կրօնական որոշակի ազատականութիւն,

եւ որ ամենակարեւորն է, մեր հայրենակիցները չեն ծուլւել մահմեդական ժողովուրդներին, յիշում են իրենց ծագումը:

Յայտնի է, որ մահմեդական պետութիւններն ու համայնքները ամէն տարի գումարում են Իսլամական համաժողովի նիստ, որի ընթացքում, ի շարս այլ հարցերի, կարգաւորւում է նաեւ մահմեդական այս կամ այն երկրին օգնութիւն (այդ թւում՝ ռազմական) ցուցաբերելու հարցը: Յայտնի է նաեւ, որ նշեալ համաժողովում Անդրկովկասի եւ Հիւսիսային Կովկասի մահմեդականութեան շահերը ներկայացնում է այդ տարածաշրջանների հոգեւոր առաջնորդ, ազգութեամբ ադրբեջանցի շէյխ-ուլ-իսլամ Ալլահշիբիւր Փաշազադէն, ում ելոյթների հիմնական մասն առնչւում է հայ-ադրբեջանական հակամարտութեանը: Հակազդեցութեան չհանդիպող ադրբեջանական ու թուրքական պատուիրակութիւններին յաջող-

լում է կրօնական բնոյթ հաղորդել դարաբաղեան ճգնաժամին եւ դրամական հսկայական օգնութիւն ստանալ համաժողովի մասնակից երկրներից: Թէ ինչ նպատակներով են ծախսուում այդ գումարները, հասկանալի է բոլորիս: Հայազգի իսլամականների մասնակցութեան պարագայում, սակայն, ադրբեջանական եւ թուրքական պատուիրակութիւններին հազիւ թէ յաջողի օգտուել այդ օգնութիւնից: Էլ չենք խօսում մահմեդական երկրներում հայամետ ուժերի գործունէութեան անխուսափելի ակտիւացման մասին:

Այս առնչութեամբ ՀՀ-ում կան ՀՀ-ից դուրս, թերեւս, նպատակայարմար կը լինէր նպաստել հայկական մահմեդական որեւէ կազմակերպութեան, ասենք՝ Հայ իսլամականների միութեան (անւանումը՝ ըստ ճաշակի) ստեղծմանը: Կանխատեսում են բարեպաշտ հայ քրիստոնեայ ընդդիմախօսների դժգոհութիւնը: Սակայն մենք հանդուրժում ենք հայազգի կրիշնայականներին, հայ բուդդայականներին, անգամ՝ հայ եհովականներին, որոնք արդէն փորձում են բանակ թափանցել՝ պատերազմող երկրում քարոզելով զինւած պայքարի անթոյլատրելիութիւն, եւ որոնք շատ յաճախ վնասից բացի հայրենիքին ոչինչ չեն



Երէկայ քրիստոնեայ հայը՝ այսօրայ մուսուլման թաքուն հայը

տալիս: Հարց է ծագում. իսկ ինչո՞ւ չօգտուել հայ մահմեդականների ծառայութիւններից, մանաւանդ, որ մահմեդականների թիւն աշխարհում հասնում է 1 միլիարդի, եւ իսլամական մի շարք պետութիւններ, ասենք՝ Իրանը կան Արաբական լիգայի մասնակիցները, թերեւս, սիրով աջակցեն այդ միութեան գործունէութեանը: Եթէ նոյնիսկ ՀՀ-ում յիշեալ կազմակերպութեան ստեղծումը կապուած է պատմահոգեբանական որոշ բարդոյթների հետ, ապա դրսում բնակւող հայազգի մահմեդական-

ների կազմակերպւած գործունէութիւնը որեւէ խոչընդոտի չի հանդիպի:

Թւում է ամէն խնդրի, յատկապէս պետական շահերին առնչւող հարցերին պէտք է մօտենալ պրագմատիկ դիրքերից: Ցանկանում ենք, թէ ոչ, բայց հայ մահմեդականութիւնն այսօր իրողութիւն է: Մերժողական կեցւածքն այս փաստի նկատմամբ, մեղմ ասած, իրատեսական չէ, խարսխւած է զուտ զգացմունքային պատկերացումների վրայ: Մենք փաստօրէն օտարում ենք մեր ժողովրդի մի հատւածը, որը, ի վերջոյ, անխուսափելիօրէն կը յայտնւի այլ պետութիւնների ազդեցութեան տակ: Մինչդեռ հայկական իսլամական, թէկուզեւ խորհրդանշական որեւէ կազմակերպութիւն կարող է հայնպաստ լուրջ բեկում մտցնել իսլամական համաժողովներում եւ ընդհանրապէս մահմեդական երկրներում: Յիշեցնենք, որ ամենահամեստ հաշարկներով հայազգի մուսուլմանների թիւը միայն Թուրքիայում հասնում է մի քանի հարիւր հազարի:

Աղբիւր՝ www.keghart.com



Հայ կուսակցութիւնները իսլամական երկրներում աշխատանք են ծաւալել

ԻՐԱՉ ԴԻՏԻ ՈՒՏՆ

ՎԵ՛ՐՋ ՀԵՔԻԱԹՆԵՐԻՆ ՎԵ՛ՐՋ ՄՈՂԱՆԵՐԻՆ

Դոկտ. Մեհմեդ Օզ

Առաջին անգամ, երբ նայեցի բացված կրծքավանդակում տրոփող եւ մարմնի մէջ արիւն փոմփող սրտամկանին, սեւ զանգւածը ինձ խիստ զարմանք պատճառեց: Այդ մոմանման կայուն թանձր կոյտը յաճախ գտնուում է գէր մարդկանց մարմնում, եւ կուտակուում է այն օրգանը շրջապատող խողովակներում, ուր, փիլիսոփաներն ասում են, հոգին է բնակուում: Բայց արագ վանում են այդ մտքերը եւ թոյլ չեն տալիս, որ դրանք միտքս շեղեն գործից: Ես սովորում էի վիրահատել, եւ, անկեղծ ասած, հաճոյքով լի էի, որ պիտի կարողանայի տեղադրելով ոտքի երակը, շրջանցէի սրտանօթի խցանւած մասը (By pass): Վիրաբոյժներին սովորեցնում են այսպէս մտածել, եւ դա ճիշտ է: Աշխատանքը լաւ կատարեցիր, փրկել ես մի կեանք, վատ՝ մահացել է մի հիւանդ: Այստեղ, առջեւդ դուրս գործից բացի, ոչ մի ուրիշ բանի համար տեղ չկայ:

Իմ նպատակն է բուժել մետաղով: Եւ սա, որոշ առումով, աշխատանքի հեշտ մասն է: Իմ եւ իմ գործընկերների համար հարց է թէ ինչո՞ւ է մարդկանց գործն այստեղ հասնում՝ պառկած վիրահատու-

թեան սեղանին, ուր սպասում են իրենց կրծքավանդակը բացւի մետաղեայ սղոցով: Այն ինչ դրամանամեծ պատճառը, յաճախ, ամենապարզն ու հասարակն է. այն ինչ ուտում են:

Մեր, որպէս կենդանական տեսակի, բնական պատմութիւնը դէպքերի մի ընդարձակ պատառ է, որի ստորոտներն ու գագաթները, ձեռքբերումներն ու ողբերգութիւնները, յաճախ որոշւել են սննդի առատութիւնով ու պակասով: Գոնէ մինչեւ քսաներորդ դար այդպէս է եղել: Այսօր, թէւ աշխարհի որոշ մասերում սովը մնում է մի ահաւոր իրականութիւն, բայց մեր մեծամասնութիւնը համարեա անսահման ձեռնահասութիւն ունի ամէն տեսակ սննդամթերքի: Այսօր մարդն արտադրում է մեծ քանակութեամբ առողջ միրգ, բանջարեղէն, միս, կաթնամթերք, որը փակում է ու սառնեցնում, եւ այդպիսով այն փրկում փչացումից ու ապականումից: Նոյնիսկ դրանք հարստացնում է վիտամիններով ու առողջարար յաւելումներով:

Սա այնպիսի առատութիւն է, որը նախնական քաղաքակրթութիւնները, միայն կարող էին երագել: Սակայն այս բնագաւառում

նւաճումները, տուել են մի անցանկալի հակառակ արդիւնք: Բոլորին մատչելի սննդակարգով, Միացեալ Նահանգներում եւ այլուր, ոչ միայն չի աճել պատմութեան ամենաառողջ սերունդը, այլ ընդհակառակը՝ այս սերունդը շարունակ տառապում է ճարպակալութեամբ, սրտանօթային հիւանդութիւններով եւ շաքարախտով: Իրականութիւնն այն է, որ ԱՄՆ-ի չափահասների երկու երրորդը, իսկ երեխաների մէկ երրորդը գէր է կամ կշիռի յաւելում ունի:

Չարքը նրանում չէ, որ մարդիկ չեն ցանկանում լաւ ուտել ու առողջ լինել: Չաւատացեք, վիրահատութեան սենեակ տանող պատգարակի վրայ պառկած մարդկանցից ոչ մէկն է ուրախ այդտեղ լինելու համար: Չարքը, հաւատաք ինձ թէ ոչ, նաեւ այն չէ, որ նրանք չեն հաւատում առողջ սննդակարգի ճշտութեանը: Խնդիրը նրանում է, որ այս մարդկանցից շատերը չգիտեն, թէ ինչպիսին է առողջ սննդակարգը: Եւ ինչպէ՞ս իմանան, երբ ամէն օր խաղի օրէնքները փոխւում են:

Մի ժամանակ, կարմիր միսը առողջարար էր համարւում, պատաները (մակարոնը)՝ վատ: Յե-

ԵՆՔ ԵՒ ... ԻՆՉՈՒՄ



... ԲԱՅՑ ՀԱԾԱԽՈՐ





Յօդածի աղբիւր՝ «Թայմ»
 շաբաթաթերթ, 2011 թականի
 Մեպտ. 12-ի համարի շապիկը

տոյ պաստան դարձաւ հիանալի, կարմիր միսը՝ սարսափելի: Եւ այսպէս վրայ հասաւ Աթրինգի խելագարութիւնը, եւ օրէնքները կրկին շրջւեցին: Եկաւ Միջերկրականեան եւ հարաւային ափերի սննդակարգերը, եւ ցածր-ճարպային սննդակարգը, զրէյվֆրուտի եւ կաղամբի սուպի սննդակարգերը... եւ բոլորն էլ խոստանում էին մեծամեծ բաներ: Այսօր

ԻՆՉ ՈՒՏԵԼ ՄՕՏԵՅՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մեր մտածելակերպը այն մասին, թէ ճիշտ ու առողջարար սննդակարգն ինչի՞ց է բաղկացած, ըստ տեխնոլոգիայի զարգացման մակարդակի, եւ ժամանակի քաղաքականութեան ու ժողովրդի զգայնութիւնների, մեծ փոփոխութիւնների է ենթարկւել:

1863



Լոնդոնում լոյս է տեսնում «Նամակ գիրութեան մասին՝ ուղղած հանրութեան» գիրքը՝

Վիլիամ Բանթինգի հեղինակութեամբ: Գիրքը կողմ է ցածր քանակութեամբ հիդրոքարբոնատ պարունակող սննդակարգի: Այս միտքը մի դար յետոյ արծագանքում է Ռաբերտ Աթկինզը:

գտնում են թե կարմիր գինին է առողջութեան միակ միջոցը, կամ սեւ շոկոլադը ... եւ կամ ուրիշ մի բան: Ամէն դարման, ասես իր հետ բերում է նոր ցաւ, նոր խնդիր: Ամէն նոր իրականութիւն մի կերպ պարզուում է, որ մասամբ խաբուսիկ առասպել է եղել:

Սակայն լաւն այն է, որ այսօր, աւելի քան երբեք, գիտենք թէ որոշակի սնունդն ինչպէս է գործում մարդու մարմնում: Թէ յատուկ մոլեկուլներ ինչպիսի ազդեցութիւն են գործում մարմնի յատուկ բջիջների յատուկ ֆունկցիաների վրայ: Եւ սրա հետ գալիս է նոր հայեացք ու մտեցում առողջ ուտելու մասին, որն աւելին է քան լոկ աւանդական խելամտութիւնը: Առասպելների եւ մարկետինգի ժամանակաշրջանը զիջում է խիստ ֆակտերի ժամանակաշրջանի: Հաւանաբար կը հաւանէք նոր մտեցումներից որոշները, չէք հաւանի միւսները, բայց շուտով կը վարժւէք դրանց: Հակառակ նախկին աւանդութիւնների ու մոդաների, խիստ ֆակտերը կը շարունակեն երկար գոյատեւել:

ՎԱՅՐԻՎԵՐՈՒՄ

Ցանկանում էք առողջ լինել,

ուրեմն մոռացեք ցածր իւղային եւ դիետային սոդայի սննդակարգը: Փոխարէնը, ախորժակով կերէք ծու, կաթ, աղ, չոր մրգեր, գինի, շոկոլադ եւ սուրճ:

Այո, դա ճիշտ է: Հակառակ տարածած մտածելակերպի, այս բոլորը, ու դեռ աւելին, կարող են օգտակար լինել ձեր մարմնի համար: Եթէ դրանք չափից աւել գործածէք, դրանք կարող են խնդիր յարուցել, ինչպէս յաճախ մեզ սովորեցրել են հաւատալ: Իրականութիւնն այն է, որ այն պարզ կանոնները, որոնց համաձայն ուտելիքները բաժանուում են երկու լաւ եւ վատ կատեգորիաների, ասում են իրականութեան միայն մի փոքր մասը: Իրականութեան մնացածը աւելի բարդ է քան մարդիկ մեծամասնաբար կարծում են:

Վերցնենք ճարպը: Մի սովորական սննդակարգի զանազան բաժիններից, ամենաշատը ճարպն է քարկոծել: Լոկ այդ բառը, ասես, բաւական է դատապարտելու տւեալ սննդանիւթը: Մենք չենք ցանկանում գիրանալ, ուրեմն, ինչո՞ւ պիտի իւղալի բան ուտենք:

Սակայն, ճարպերը, ընդհանրապէս վատը չեն: Ընդհակառակը, մոնոսատիւրէթոյ եւ փոլի-

անսատիւրէթոյ ճարպերը օգտակար են առողջութեան համար: Պարզել է, որ մոնոսատիւրէթոյ ճարպերը (քանոլայի իւղը եւ ձիթաիւղը) իջեցնում են LDL քոլեստերոլը (վատ քոլեստերոլը) եւ բարձրացնում են HDL քոլեստերոլը (լաւ քոլեստերոլը) եւ այսպիսով իջեցնում են սրտային հիւանդութիւնների եւ աթերոսկլերոզիսի վտանգը: Փոլիսատիւրէթոյ ճարպերը, օրինակ Օմեգա 3-ները, իջեցնում են LDL քոլեստերոլը եւ նոյնպէս իջեցնում են բորբոքման, սրտանօթային եւ մի շարք այլ հիւանդութիւնների վտանգը: Օմեգա 3-ները օգտակար են նաեւ ուղեղի առողջութեան համար: Վատ ճարպերը ընդհանրապէս յագեցած (սատիւրէթոյ) ճարպերն են (որոնք ընդհանրապէս գտնուում են կենդանական սննդամթերքում), փոփոխւած ճարպերը (որոնք գտնուում են հիդրոժենէ եւ մասամբ հիդրոժենէ իւղերում) եւ նրանց բարեկան քոլեստերոլը (որը գտնուում է ձի սպիտակուցում, մսերում եւ կաթնամթերքում): Բայց այս ընդհանուր բաժանումները եւս կարող են սխալ ուղու վրայ դնել մեզ: Վերջին հետազօտութիւնների հա-

1930



նակակից սառեցած սննդամթերքի արդիւնաբերութեանը: Այսպիսով մեծ զանազանութեամբ առողջ սննդամթերք հասանելի է դառնում ողջ տարւայ ընթացքում:

Քլարենս Բերդսլիի առաջարկած սննդամթերքի սառեցման գաղափարը սկիզբ է դնում ժամա-



1963

Նիւ Եօրք Սիթիում տնտեսուհի Ջին Նիդեչը

հիմնադրում է գէր մադկանց հովանաւորող մի կազմակերպութիւն, որն կոչւում է «Կշիռը վերահսկողներ»:

մածայն, որոշ չյագեցւած ճարպեր (օրինակի համար կոկոսի իւղը) եւ մի խօսքով սննդակարգում գտնուող քոլեստերոլը կարող է այնքան, որ նախապէս էին կարծում, արեան քոլեստերոլի բարձրացում չառաջացնի: Միակ ճարպը, որ ընդհանրապէս հաւատացած են, որ վատ է, փոփոխւածներն են, որոնք մեր օրերում ուտելիքների մեծամասնութիւնից հանոււմ են:

Որոշ ճարպերի վերականգնումը (հիարկէ չափաւոր), յանգում է նաեւ պաշարւած ձւի փրկմանը: Որպէս սրտաբան վիրաբոյժ, յաճախ զարմանում եմ, թէ ի՞նչ մեծ տարբերութիւն կայ այն եղանակների միջեւ, որով զանազան մարդիկ դիետային քոլեստերոլը օգտագործում են: Մեծամասնաբար, մարդիկ քոլեստերոլով համեմատաբար հարուստ սննդամթերք ուտելուց յետոյ, շատ լուրջ խնդիրներ չեն ունենում իրենց արեան քոլեստերոլի բարձրացման առումով: Բայց նաեւ կան աւելի սակաւաթիւ մարդիկ, որոնք փոքր քանակով քոլեստերոլ ընդունելուց յետոյ էլ բարդութիւններ են ունենում: Եւ հէնց այս սակաւաթիւերը ծառայել են որպէս հեքիաթային չափանիշ բոլորի

համար, եւ այսպիսով ծուն ու կարմիր միսը, որ ինչ խօսք շայն գործածութեան դէպքում վնասակար են, յայտարարել են ռադիօակտիւային նիւթի աստիճան վտանգաւոր: Այսօր բժիշկների մեծամասնութիւնը հանգիստ խորհուրդ են տալիս օրեկան մի ձու սպիտակուցով, որպէս բարձորակ պրոտէինի էժան աղբիւր, թէւ որոշ հիւանդներ զգուշաբար պիտի սպասեն մինչեւ իրենց արեան հետազօտութեան արդիւնքների պարզելը:

Աղը եւս սատանայացած բաղադրանքներից է: Իրականութիւնն այս է. մեր սիրտը չի կարող բաբախել առանց աղի, աւելորդ նատրիումը կարող է արեան ճնշումը բարձրացնել վտանգաւոր մակարդակի, բայց միայն բնականութեան 10 տոկոսի մէջ. եւ աֆրիկոսամերիկացիները աւելի զգայուն են այս հարցում: Աղի հանդէպ ձեր զգայնութիւնը հասկանալու միակ ձեւն այն է, որ աղ գործածելուց յետոյ չափէք ձեր արեան ճնշումը եւ այն համեմատէք նորմալ պայմաններում ձեր արեան ճնշման հետ: Բայց նոյնիսկ եթէ ձեր արեան ճնշումը մնում է նորմալի սահմաններում, խենթի պէս աղա-

մանը մի գործածէք: Նատրիումը, երբ խառնոււմ է պատրաստւած կերակրի միւս բաղադրամասերի հետ, բացում է ախորժակը, եւ դա կարող է օգնել գիրանալուն: Լաւն այն է, որ բոլոր գերզգայուն մարդիկ, այսինքն նրանք, որոնց արեան ճնշումը հանգստութեան պայմաններում, 140/90 -ից բարձր է, կը շահեն աղի սակաւ գործածութիւնից. դա հեշտ քայլ է, որ միջին 55 տարեկան մարդուն կարող է պարզել 5 տարի յաւելեալ կեանք:

Կարմիր գինու համբաւը եւս, ի հաճոյս գինի սիրողների, բաւականին բարելաւել է: Ռեսերաբորը մի անթիօքսիդանտ, որը գտնոււմ է խաղողի կեղեւում, իջեցնում է վատ քոլեստերոլի ազդեցութիւնը, որն իր հերթին նւազեցնում է սրտանօթային հիւանդութիւնների վտանգը: Որոշ փորձեր կենդանիների վրայ, ապացուցում են, որ դա կարող է օգտակար լինել նաեւ ճարպակալութեան եւ շաքարախտի դէմ: Սակայն, քանի որ գինին պարունակում է ցածր քանակութեամբ ռեսերաբոր (առաւելութիւնները ամբողջութեամբ վայելելու համար հարկ է խմել 60 լիտր) աւելի լաւն այն կը



1980-ականներ

Կաղամբի սուլփի դիետան՝ եօթօրեայ մի սննդակարգ է, որը

խոստանում է արագ կշռի կորուստ՝ կարճ ժամանակաընթացքում, եւ որը տարածոււմ է Միացեալ Նահանգներում: Դա տեղի է ունենում ֆաքսի գործիքի շնորհիւ, որն այդ օրերին սկսել էր գործածուել Ամերիկայի գրասենեակներում:

Այս սննդակարգը հետագայում քննադատոււմ է մասնագետների կողմից:



1990

Փաթեթաւորւած սննդամթերքի համար օրէնքով պարտադրա-

կան է դառնում ստանդարդի պիտակը: Առողջապահութեան փորձագէտները քննադատոււմ են այդ պիտակները՝ դրանց վրայ նշւած մատուցման չափերը անիրական լինելու համար:

լինի, որ այս անթօքսիդանտը ներառէ ձեր սննդային յաւելումների ցանկում: Դրանով հանդերձ լաւ կը լինի ընպէլ օրական մի քիչ կարմիր գինի, որը համեմատաբար աւելի քիչ քալորի է պարունակում եւ առաջացնում է աւելի մեղմ կախաւածութիւն, քան միւս ալկոհոլիկ ընպէլիքները: Նաեւ ընդունաւծ է, որ նագեցնում է վատ քոլեստերոլը եւ բարձրացնում լաւը եւ պաշտպանում է անօքսիդէր քոլեստերոլի պատճառած վնասաւածքներից: Կարմիր գինին սպառում է ուրիշների ընկերակցութեամբ, ուրեմն խրախուսում է մարդկային շփումները, որն իր հերթին շահաւէտ գործօն է մարմնի առողջութեան համար:

Շոկոլադը անթօքսիդանտի մի ուրիշ աղբիւր է. այս դէպքում որպէս ֆլաւանոլիդ, որոնք շոկոլադի հատիկներին տալիս են նրա դառն ու կծու համը: Շոկոլադը ինչքան աւելի սեւ լինի, այնքան աւելի քիչ է խառնաւած կաթի եւ այլնի հետ եւ աւելի խիտ է ֆլաւանոլիդներով: Չոր մրգեղէնը, թէւ պարունակում են բարձր քանակութեամբ չլագեցւած ճարպ եւ քալորի, կարող են իջեցնել վատ քոլեստերոլը, ինչպէս եւ քաղցա-

ծութեան զգացումը: Սուրճը, որը մասնագէտների կողմից հակացուցւում է, իրականում անթօքսիդանտի թիւ մէկ աղբիւրն է արեւմտեան աշխարհում եւ որոշ հետազօտութիւնների համաձայն իջեցնում է խելագարութեան, Փարքինսոն հիւանդութեան ու շաքարախտի 2-րդ տեսակի հաւանականութիւնը:

Նոյնիսկ բնական կաթի դեմ ներկայացուող մեղադրագիրը, որը որոշների կողմից դատապարտւում է որպէս մի բաժակ լիքը հեղուկ իւղ, աւելի բարդ է քան առերեւոյթ թւում է: Դա ճիշտ է, որ այն երեխաները, որ բնական կաթ են խմում, ահագին քալորի են ստանում, սակայն կաթը իրականում կարող է օգնել կշիռը վերահսկել, որովհետեւ կալսիումը խառնում է մարդու ստամոքսում մարսող սննդի ճարպի հետ եւ պատճառ է դառնում աւելի ցածր քանակութեամբ ճարպ իւրացնի մարմինը: Ըստ որոշ հետազօտութիւնների, կաթնասերի, ցածր-ճարպային կաթի ու բնական կաթի միջեւ, կշռի վերահսկման առումով լուրջ տարբերութիւն գոյութիւն չունի: Աւելին, երբ հանում էք կաթի ամբողջ ճարպը, մնում է խիստ խտա-

ցած բնական շաքար, որը քաղցրեղէնի պէս հակազդեցութեան մէջ է մտնում ձեր հորմոնների, յատկապէս ինսուլինի հետ:

Այս սննդամթերքների վերաբերեալ, բոլոր դէպքերում, բանալին չափաւորութիւնն է: Սպառեցէք օրական աւելի քան 16 օնսից (կէս լիտր) բնական կաթ եւ դրա օգուտները կը գիջեն աւելորդ քալորիների ստացմանը: Մի օնսից աւելի սեւ շոկոլադ շաքաթը մի քանի անգամ, եւ ամէն գիշեր երկու բաժակ կարմիր գինի, եւ դրա արդիւնքը առաջինի դէպքում կը լինի՝ կշռի յաւելում, իսկ երկրորդինը՝ դատական հետապնդում: Չափից աւել կարմիր միսը (շաքաթական կէս կիլոյից աւելին) կարող է բարձրացնել մարդու կշիռը: Կարմիր մսի բարձր սպառումը միաժամանակ կարող է ձեզ զրկել ձեր փորթինը ձկան մսից հայթայթելու առաւելութիւններից. ձուկը հարուստ է ուղեղ կառուցող օմեգա-3 ճարպային թթուներով:

*Թարգմանեց՝
Լեւոն Ահարոնեանը
Աղբիւր՝ «Թայմ» շաքաթաթերթ*



տա» կոչուող սննդակարգերը ժողովրդականցնում են, այսպէս կոչւած, քարանձաւի մարդու դիետան, որը հիմնաւած է հողագործական յեղափոխութիւնից առաջ ապրող որսորդ-հաւաքողների սննդակարգի վրայ:

2010
«Պալէոյի լուծումը» եւ
«Նոր էոլոլցիայի դիե-

ՄԻ ՍՐՃԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ ՄԻՆՉԵՒ

«ՓԱՐԻՉԵԱՆ ՍՈՒՐՃ»-Ը ՉՈՂ Է ՉԵՆԻՄ ԲԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՄՔԻՆ

Գայիանէ Աբրահամեան

Ապամոնտաժել է Երեւանի սիրած սրճարաններից մէկը՝ «Փարիզեան սուրճը», որը թէև քաղաքի այցեքարտերից էր ու դարձել էր անբաժանելի մաս, սակայն գոհ գնաց նորընտիր քաղաքապետ Տարօն Սարգսեանի խոստմանը՝ «Մայթերը վերադարձնել երեւանցիներին»:

Դեռ մի քանի ամիս առաջ քաղաքապետարանում որոշում էր կայացւել՝ ազատել Արուսեան փողոցի ընդարձակ մայթը տարբեր խանութներից ու սրճարաններից: Սակայն որոշ քաղաքացիներ թերահաւատ են՝ արդէօք օրէնքը կը կիրառուի՞ նաեւ մի քանի մեծ ու փոքր խանութների նկատմամբ,

որոնք նոյնպէս գտնուում են Արուսեան փողոցում (դրանցից մի քանիսը նոյնիսկ փակուում են այլ խանութների ճակատամասը): Ենթադրուում է, որ այս խանութները պատկանում են ազդեցիկ գործարարների: «Փարիզեան սուրճ»-ը, որ Երեւանում գործում է արդէն 16 տարի, պատկանում է ֆրանսահայ գործարար Վալերի-Աշխէն Գործունեանին, որը պատմում է, որ իրեն այցելել են Երեւանի Կենտրոն վարչական շրջանի աշխատակազմի աշխատակիցներն ու յայտնել, որ սրճարանի բացօթեայ հատւածը «պէտք է քանդեն առաջիկայ մի քանի օրերի ընթացքում»: «Ես էլ որոշեցի թոյլ



չտալ, որ իրենք դա անեն, եւ առաւել նպատակայարմար գտանք ինքներս ապամոնտաժել», - «ԱրմենիաՆաու»-ին ասում է Գործունեանը: Գործունեանը

ԿԱՐԵԼԻ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԸԼԼԱԼ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ԵՒ ԳՈՐԾԱՐԱՐ ԵՒ ԸՆԴՊԻՍԱԴԻՐ

ՓԱՐԻՉԻ «ՆՈՐ ՅԱՌԱՋ» ԹԵՐԹԻ ՀԱՐՋԱԶԻՐՈՅՑԸ «ՓԱՐԻՉԵԱՆ ՍՈՒՐՃ»-Ի ՍԵՓԱԿԱՆՏԻՐՈՋ ՇԵՏ

Ֆրանսահայ գործարար՝ Վալերի-Աշխէն Գործունեան, վերջերս Հայաստանի մէջ դարձաւ հարկային տեսչութեան թիրախ, որուն պատճառով 16 տարի տնտեսական գործունէութիւն վարելէ ետք, Դեկտեմբերի վերջաւորութեան որոշեց վաճառել Երեւանի հանրածանօթ իր «Փարիզեան սուրճ» ընկերութիւնը եւ վերադարձաւ Փարիզ: Նկարագրով՝ յանդուգն եւ ըմբոստ, տիկին Գործունեան, հոսանքն ի վեր թիավարող է: Ներդրում կատարած է Հայաստանի մէջ Լեւոն Տէր Պետրոսեանի օրօք՝ տնտեսական սուր տագնապի պահուն: Այսօր, կրկին տնտեսական սուր տագնապի պահու մըն է, որ կը լքէ Հայաստանը, հակառակ իշխանութիւններուն կողմէ սփիւռքահայերուն ներդրումը քաջալերելու ուղղութեամբ տարած քարոզչական աշխատանքին: Տիրող վարչակարգի հանդէպ Տիկին Գործունեան սուր քննադատութիւններ կը կատարէ, որոնք կառաջնորդեն հետեւեալ էական հարցադրումին՝ «Կարելի՞ է Հայաստանի մէջ ըլլալ միաժամանակ եւ գործարար, եւ ընդդիմադիր ճակատի համակիր»:

Ան՝ միակը չէ, իրմէ առաջ ամերիկահայ գործարար Նարեկ Յարութիւնեան եւս հալածանքի թիրախ դարձաւ իր քաղաքական արդարամէտ եւ ազատատենչ համոզումներուն համար, նոյնիսկ կարճ ժամանակ բանտարկութեան ենթարկւեցաւ, սակայն ազատ արձակւեցաւ զանազան մակարդակի հակազդեցութիւններու տարափին տակ:

ԽԱԲ. «ՆՅ»-ի

ՍՓԻՒՔԵԱՆ ՆԵՐԳՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՁԵՐԸ



մտադիր է անձամբ հանդիպել Մարգարեանին՝ ճշտելու, թե ինչ է անհրաժեշտ սրճարանը կրկին վերականգնելու համար, քանի որ «հարցը միայն մեր սրճարանը չէ,

այս ողջ տարածքը մենք էինք կանաչապատում ու գեղեցկացնում, ինչը հաճելի էր ոչ միայն մեր յաճախորդներին, այլև անցորդներին»: Ծառերի սուերում տեղադրված սրճարանի սեղանների շուրջը յաճախ հալաբուրում էին հայ մտաւորականներ ու մշակոյթի ճանաչված դէմքեր, որոնք «Փարիզեան սուրճ» սրճարանը համեմատում էին խորհրդային տարիներին յայտնի Երեւանի «Կոզիրեօկ» սրճարանի հետ: Յայտնի դերասան Միքայէլ Պօղոսեանն «Արմենիա-Նաու»-ին ասում է, թէ չէր ցանկանայ, որ սրճարանը փակւեր, սակայն չէր էլ ցանկանայ, որ օրէնքը վերապահումներով կիրառւեր: «Իհարկէ, «Փարիզեան»-ը շատերիս կողմից էր սիրուած, եւ դա քաղաքի հաճելի վայրերից մէկն էր: Եթէ տեսնեն, որ օրէնքը ոչ բոլորի համար է գործում, անպայման կը

պայքարեն վերականգնման համար, սակայն եթէ իսկապէս բոլոր այդ տարածքի խանութներն ու սրճարանները ապամոնտաժեն, ապա պայքարն անիմաստ կը լինի»,- «Արմենիա-Նաու»-ին ասում է յայտնի դերասան Միքայէլ Պօղոսեանը: «Ֆէյսբուք» սոցիալական ցանցում, որտեղ վերջին շրջանում պարբերաբար տարբեր նախաձեռնող խմբեր են ստեղծուում, ակտիւ է եւս մէկը. «Ո՛չ «Փարիզեան սուրճ»-ի բացօթեայ հատուածի ապամոնտաժմանը» խմբի 200 անդամները բողոքի ծայն են բարձրացնում՝ պահանջելով իրենց վերադարձնել սիրուած սրճարանը, որը, ի տարբերութիւն վերջին տասնամեակում սնկի մման աճած հարիւրաւոր սրճարանների, շատերի կարծիքով՝ ամենախորհմակն է:

Աղբիւր՝ www.armenianow.com

Հ. Տիկին Գործունեան, Ամանորին Հայաստանէն վերադարձած էք Ֆրանսա. յետադարձ հայեացքով, երբ կը նայիք վերջին ամիսներու իրադարձութիւններուն, ի՞նչ կը զգաք:

Պ. Գիտէք, չեմ կրնար հաւատալ, որ պիտի վերջնականօրէն լքեն Հայաստանը. անշուշտ, նկատի ունիմ գործի առումով, որովհետեւ Հայաստանը միշտ իմ կեանքին մէջ կը մնայ: Երբեմն տեսակ մը վախ կը զգամ՝ թէ ինչպէս պիտի ինքզինքս վերագտնեն Ֆրանսայի մէջ... Որքանո՞վ իմ տեղը նորէն պիտի գտնեն հայկական պայքարին մէջ...

Հ. Հայկական պայքար ըսելով՝ ի՞նչ կը հասկնաք:

Պ. Քաղաքական պայքար, ընկերային պայքար, կանանց պայքար, Հայ Դատ, հանրային պայքար... Երբ Հայաստան կաշխա-



տիս, անկախ քեզմէ՝ կը ներքաշուիս պայքարի մէջ, մանաւանդ որ ես, որպէս ֆրանսական մշակոյթը կրող սփիւռքահայ կին, շատ բաներու մասին կրնայի խօսիլ: Տնտեսական գործունէութեամբ ըզբաղող մարդ ըլլալով ես հոն բաւական մեծ լսարան ունիի... Իսկ հոս, ես հիմ պայքարող եմ Հայ Դատին համար, բայց հիմա յաճախ կըսեն, որ եթէ Հայոց Ցեղասպանութեան ժխտումը պատժող օրէնքը ընդունի Ծերակոյտին կողմէ, ազգային շատ մը դէմքեր

անգործ պիտի մնան եւ թռչակի անցնին... Ամէն պարագայի, այս պայքարը ոչ թէ Հայաստանի, այլ մեր՝ ֆրանսահայ գաղութի երկարամեայ պայքարն է. բնականաբար ուրախ եմ, հակառակ անոր, որ եթէ ան յաջողութեամբ պսակւի, պարզապէս խորհրդանշական յաղթանակ մը կը լլայ...

Հ. Հայաստան պիտի շահի՞ այդ յաղթանակէն:

Պ. Ես չեմ ընդունիր, որ Հայաստանի պետութիւնը սեփականացնէ այդ պայքարը, որ ֆրանսահայերու պայքարն է, եւ իրենք է, որ պիտի շահին... Հայաստանի իշխանութիւնները ակտիւ չեն եղած զբաղին երկրին ներքին խնդիրները լուծելով, քանի այդ բնագաւառին մէջ իրենք տակաւին շատ գործ ունին ընելիք...

Մէկ դրական բան կայ այս ամենում մէջ. եթէ նշուած օրէնքը հաս-

տատի, սփիւռքահայութիւնը ստիպած պիտի շրջի դէպի Յայաստան, որովհետեւ ուրիշ զբաղում պիտի չունենայ: Եւ այն ատեն, իմ ընկերներէն շատեր, որ հոս պայքարած են, պիտի կարենան իրենց ուժն ու եռանդը ներդնել Յայաստանի մէջ մարդկային իրաւունքներու, ընկերային եւ այլ ազատութիւններու պաշտպանութեան...

Յ. Ո՞րն է, ձեր կարծիքով, Յայաստանի մէջ ամենէն շատ աչքի զարնող՝ աղէտաբեր թերացումը:

Պ. Կաշառակերութիւնը: Ասոր հետ կապած? մարդոց իրաւունքներու պաշտպանութիւնը: Անհրաժեշտ է՝ գործարար միջավայրի բարելաւում: Տնտեսութեան մէջ մենաշնորհներու վերացում: Այս բոլոր խնդիրները հրատապ լուծումի կը սպասեն պետութեան կողմէն, որպէսզի Յայաստան գրաւիչ երկիր դառնայ սփիւռքահայ ներդրողներուն համար:

Յ. Տիկին Գործունեան, եթէ մնայիք Յայաստան եւ փորձէք մինչեւ վերջ պայքարիլ՝ ներսէն փոխելով իրավիճակը, աւելի արդիւնաւէտ պիտի չըլլա՞ր:

Պ. Տնտեսութեան մարդը պայքարելու համար պէտք է նիւթական յենարան ունենայ: Իսկ երբ իմ նիւթականը խեղդեցին, ես պարզապէս միջոց չունէի այլեւս հոն մնալու եւ ներսէն պայքարելու համար:

Յ. Քիչ մը կը պատմէք՝ ինչպէ՞ս սկսաւ ձեր տնտեսական գործունէութիւնը Յայաստանի մէջ:

Պ. «Փարիզեան սուրճ»-ը, նախ եւ առաջ, բովարան էր. 16 տարի առաջ Ֆրանսայէն մեքենայ մը տարինք եւ կը բովէինք խանութին մէջ, ժողովուրդն ալ կրնար հետեւիլ այդ ամբողջ գործընթացին: Յետագային՝ քանի մը տարի անց, բացինք սրճարանը՝ Աբովեան փողոցին վրայ, իսկ գործատունն ալ

հիմա Ջրվէժի մէջ է. հոն սուրճը կը բովէինք, կաղայինք, ծրարումը կընէինք եւ յետոյ կառաքէինք ամբողջ Յայաստանի տարածքին: Սուրճի գործը մեր մօտ ընտանեկան է. հօրմէս կու գայ. հայրս վանեցի ընտանիքի զաւակ էր՝ ծնած Երեւան, եւ քանի որ իրենք հակախորհրդային հայեացքներ ունէին (ռամկավար էին), արտագաղթեցին Ֆրանսա: Յայրս միշտ կըսէր՝ յաջողելու համար երկու հանգամանք պէտք է. բախտ եւ աշխատասիրութիւն: Ինք գնաց Գամըրուն, հոն սկսաւ իր գործունէութիւնը, յետոյ Ֆրանսայի մէջ ալ մեծ յաջողութիւններու հասաւ: Իսկ ես ալ, ահաւասիկ, խորհրդանշական կերպով, սուրճի գործով նորէն Յայաստան հասայ:

Յ. Եթէ ձեր հայրը հիմա ողջ ըլլար, ի՞նչ հայեացքով պիտի նայէր այս բոլոր դէպքերուն:

Պ. Ինք թոյլ պիտի չտար, որ հեռանայի Յայաստանէն: Բայց միեւնոյն ժամանակ, ինք ինծի հաւանաբար նիւթական միջոցները կու տար, որ կարենամ շարունակիլ... (կը ծիծաղի): Ես կին եմ, մայր եմ, եւ դժբախտաբար կարելիութիւն չունիմ՝ եսասիրաբար միայն իմ հաճոյքի, իմ պայքարի մասին մտածելու. ես պատասխանատու մայր եմ, եւ պէտք է մտածեմ իմ երկու զաւակներուն մասին, որ հոս են: Ատիկա չի նշանակեր, թէ պայքարս կը դադրեցնեմ: Պարզապէս Յայաստանի իշխանութիւններուն միջոցները աւելի զօրաւոր էին, եւ նիւթապէս ինծի ճնշեցին:

Յ. Տիկին Գործունեան, թէեւ արդէն շարք մը հարցազրոյցներ տուած էք Յայաստանի մէջ, բայց մեր ընթերցողներուն համար կրնա՞ք հակիրճ կերպով ներկայացնել, թէ ո՞րն էր խնդիրը, որ ձեզ ստիպեց հեռանալ երկրէն:

Պ. 2010-ին հարկային ծառայութեան աշխատողները սխալներ

գտան՝ 3 տարի առաջուան հաշուապահութեան մէջ. 53 միլիոն դրամի սխալ կար: Իմ հաշուապահը ինծի ըսաւ՝ տիկին Աշխէն, մի՛ մտահոգուիք, պիտի շտկենք այդ ամէնը: Սակայն այդ ամէնը մնաց, եւ ժամանակը գայ՝ պիտի խօսիմ ատոր մասին ալ: Ամէն օր այդ գումարին կաւելնար 0,15 տոկոս, եւ վերջնական գումարը, որ ինծմէ առիմ՝ մօտ 80 միլիոն դրամ էր: Իմ բոլոր նամակները եւ հանդիպումները՝ ժամանակի ընթացքին գումարը մաս-մաս, ամսէ ամիս վճարելու խնդրանքով, անպատասխան մնացին: Յաւանաբար բան մը կար, որ չէի ըներ ըստ իրենց սովորութեան. ինչ որ ալ ըլլայ, ես չեմ գիտեր կաշառել, եւ ատիկա իմ սկզբունքներուն դէմ է:

Երկրի մը իշխանութիւնները, որուն տնտեսութիւնը այդքան փոքր է, այդքան քիչ ներդրող ունի, շահագրգռած պէտք է ըլլային տնտեսվարող մը չկորսնցնելով, որ քիչ թէ շատ, գոնէ 50 աշխատատեղ կը պահէ...

Յ. Կը մտածեք, որ ձեր ընդդիմադիր ըլլա՞լը դեր խաղաց այս տեսակ վերաբերումին մէջ:

Պ. Այո՛, ես չեմ ժխտեր, որ քրոնիք ընդդիմադիր եմ եւ ատանկ ալ կը մնամ, որովհետեւ ընդդիմադիր ըլլալը առողջարար է: Նամանաւանդ, եթէ բազմաթիւ թերութիւններ կան երկրին մէջ, կառուցողական քննադատութիւնը միշտ ալ օգտակար է: Յարցը միայն ցոյցերուն երթալը, կամ Մարտ 1-ի պատկերները սրճարանիս մէջ փակցնելը չէր: Երեք տարի առաջ ես Յայաստանի արդարադատութեան հետ խնդիրներ ունեցայ, եւ հոս՝ Ֆրանսայի մէջ բաց նամակով մը հանդէս եկայ: Ան թարգմանեցաւ հայերէն եւ բաւական մեծ արձագանգ ունեցաւ Յայաստանի մէջ: Այն ատեն նախագահը նոր էր, եւ իրենք ատիկա դիտեցին իբրեւ քաղաքական քայլ...

ԻՆՉՊԵՄ Է ՀՈՍՈՒՄ ԿԱՊԻՏԱԼ

Լուսինե Բարսեղյան

Յ. Իսկ գուցե բացատրութիւնը շատ պարզ է, եւ ուղղակի մէկը կուզէր տիրանա՞լ «Փարիզեան սուրճ»-ին:

Պ. Ես չեմ գիտեր եւ 100 տոկոսով վստահ չեմ կրնար ըսել... Մեր ընկերութիւնը կը գրաւէ հայաստանեան սուրճի շուկայի ընդամենը շուրջ 0,5 տոկոսը: Բայց հաստատ է, որ «Փարիզեան սուրճ»-ը, իբրեւ ծանօթ վաճառանիշ, կրնար խանգարել ուրիշներուն... Ամէն պարագայի, գործատունը արդէն վաճառած էմ, կը մնայ միայն սրճարանն ալ վաճառելը, եւ վերջ:

Յ. Յաջորդ անգամ ե՞րբ Հայաստան մեկնելու մտադիր էք:

Պ. Երբ իմ փաստաբանս ըսէ, որ արդէն սրճարանի վաճառքի պայմանագիրը պատրաստ է, պիտի երթամ որ ստորագրեմ: Կարծեմ որ այս գնորդները գոնէ նորմալ եւ խելացի մարդիկ են: Ինձի ալ առաջարկած են սենեակ մը յատկացնել վերի յարկը, որ Հայաստան այցելուս հոն բնակիմ, որպէսզի «Փարիզեան սուրճ»-ի «ոգին» հոն մնայ: Ես, ամէն օր, երբ «Փարիզեան»-ի մէջ կը նստէի սուրճ կըմպէի, շատեր ինձի կը մօտենային, կը զրուցէինք, կը ծանօթանայինք... Յոյս ունիմ, որ հիմա ալ, գոնէ տարին երկու-երեք անգամ պիտի կարենամ Հայաստան երթալ եւ որոշ չափով մասնակցիլ այն պայքարներուն ու ջանքերուն, որ պիտի մեր երկիրը քիչ մը աւելի մօտեցնեն մեր երազած օրինակելի պետութեան տիպարին, որ մեր բոլորինը պիտի ըլլայ... Եթէ չունենանք հզօր պետութիւն, սփիւռքահայութիւնը մէկ-երկու սերունդ յետոյ պիտի ձուլի, վերանայ: Հետեւաբար, ինձի համար ամենէն կարեւոր, առաջնակարգ պայքարը այդ է՝ մեր երկիրը շէնցնելը, ոչ թէ ուրիշներունը:

Հարցազրոյցը վարեց՝
Տորք Դալալեան

Միայն վերջին շրջանում Հայաստանից խոշոր կապիտալի արտահոսքի երեք աղմկոտ դէպք է արձանագրուել, որոնց մասին խօսուել է բացայայտ: Վերջերս պաշտօնապէս հաստատուեց, որ ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկեանը 56.3 միլիոն դոլարով գնել է Լատւիայի մայրաքաղաքի «Ռիգա» հիւրանոցը:

Մինչ այդ մամուլը գրել էր, որ Պետեկամուսնների կոմիտէի նախագահ Գագիկ Խաչատրեանը 200 միլիոն եւրոյով ձեռք է բերել Աւստրիայի Չալցբուրգ քաղաքում գտնուող շոկոլադի գործարանը: Այս տեղեկութեանը ՊԵԿ-ի լրագած արձագանքը ոչ թէ հերքում էր, այլ, ըստ էութեան՝ հաստատում: «Փարիզեան սուրճ»-ի սեփականատեր Վալերի-Աշխէն Գործունեանը յայտարարեց, որ Դեկտեմբերի 29-ին մէկընդմիշտ լքում է Հայաստանը. նա արդէն վաճառել է «Փարիզեան սուրճ»-ը, իսկ Աբովեան փողոցի վրայ գտնուող համանուն սրճարանը վաճառքի ընթացքում է: Սրանք այն դէպքերն են, որոնց մասին լրատւամիջոցներն ու հասարակութիւնը տեղեակ են: Այս ընթացքում, սակայն, իշխանական կուլիսներում շարունակ խօսակցութիւններ են եղել, որ տարբեր գործարարներ ու պաշտօնեաներ տեղափոխում են իրենց բիզնեսը, մասնաւորապէս, Վրաստան: Աժ ԴՅԴ խմբակցութեան պատգամաւոր Արա Նռանեանը նոյնպէս նկատել է այդ միտումը: «Անցնող տարւայ ընթացքում բազմաթիւ հրապարակումներ եղան այն մասին, որ Հայաստանից գործարարները արտահանում են կապիտալ եւ ներդրումներ են անում այլ երկրներում: Ես կառաջարկեմ այդ ներդրումները բաժանել երկու մասի: Առաջինն այն դէպքն է, երբ ձեռնարկութիւնը Հայաստանում բաւական լայն գործունեութիւն է ծաւալել եւ, ունենալով արտահանման հնարաւորութիւններ, չի կարողանում դա անել, որովհետեւ փակւած է հայկական շուկայում եւ ներդրումներ է անում այլ երկրներում՝ իր էքսպանսիան ապահովելու համար: Բայց կայ երկրորդ դէպքը, որտեղ մենք հանդիպում ենք կապիտալի ոչ թէ էքսպանսիայի, այսինքն՝ ոչ թէ ընդլայնմանը կամ հզօրացմանը Հայաստանից դէպի այլ երկրներ, այլ պարզապէս՝ կապիտալի փախուստի»,- մեր զրոյցում իրավիճակը մեկնաբանեց նա: Ըստ տնտեսագետի, այս երկրորդ դէպքում ունենք երկու տեսակի գործարարներ. առաջինը նրանք են, որոնք Հայաստանից փախչում են, որովհետեւ այստեղ հնարաւոր չէ արդար մրցակցութեան պայմաններում գործ անել: Գործարարների երկրորդ խումբը, ըստ տնտեսագետի, պրոիշխանական կամ իշխանութեանը մօտ կանգնած անձինք են, որոնք կապիտալ են արտահանում երկրից: «Այս դէպքը ամենամտահոգիչն է, որովհետեւ սա ապացուցում է, որ նրանք, ովքեր ռէալ, իրական լծակներ ունեն Հայաստանի Հանրապետութիւնում իրավիճակը փոխելու, բարեփոխումներ իրականացնելու, մթնոլորտը լաւացնելու, քաղաքացիների կենսամակարդակը բարձրացնելու համար, իրականում Հայաստանում ապագայ չեն տեսնում եւ պարզապէս իրենց համար ապահովում են պահեստային, այսպէս ասած՝ օդանաւակայաններ այլ երկրներում: Եւ բոլորովին էլ պէտք չէ զարմանալ, բայց նոյն այդ մարդկանց երեխաները սովորում են այլ երկրներում, այդ մարդիկ այլ երկրներում ներդրումներ են անում նաեւ բնակարանների, անշարժ գոյքի մէջ: Այսինքն, կարելի է ասել, որ այն էլիտան, որը գումարներ է արտահանում Հայաստանից, ըստ էութեան՝ ինքը չի հաւատում իր կողմից կառավարող երկրի ապագային: Այ սա ամենամտահոգիչն է»,- ասում է Նռանեանը:

Այսինքն, այդ մարդիկ մի վիճակի են հասցրել Հայաստանը, որ իրենց երեխաների ապագայի համար մտահոգւելով՝ ամէն ինչ անում են, որ նրանք այստեղ չապրեն: «Ստացւում է՝ իրենք վախենում են այն երկրից, որը թողնում են իրենցից յետոյ»,- կարծում է Նռանեանը:

Աղբիւր՝ «Հայկական ժամանակ»

Երեւանի Պետական համալսարանի հրատարակչութիւնը պետպատկերի շրջանակներում տպագրել է ընթերցողի սեղանին է դրել բազմավաստակ հնագէտ Սանդրո Սարդարեանի «Ժայռապատկերներ» գիրքը (հայերէն, ռուսերէն, անգլերէն), որը ընդգրկում է հեռաւոր ժամանակների արեւստի մնուչներ՝ նեոլիթից բրոնզի դարը ներառեալ, մի քանիսը յայտնաբերած Արագած լեռան քարայրներում (զաղաներ), հիմնական մասը՝ Գեղամայ լեռան լանջերից:

Հրատարակելով հեղինակի մահից 15 տարի անց, գիրքն ամբողջացրեց գիտնականի՝ Հայաստանի հնագոյն պատմութեանը նւիրած մենագրութիւնների շարքը (ռուսերէնով՝ «Նախնադարեան հասարակութիւնը Հայաստանում», եւ «Հայաստանը քաղաքակրթութեան օրրան»):

Հայաստանի հնագոյն պատմութեան բացայայտման բնագաւառում Սանդրո Սարդարեանի ծառայութիւնները դժար է գերազնահատել: 1944 թւականից սկսած Արագածի տարածքի մանրակրկիտ հետազոտութիւններից յետոյ գիտնականն Արտին լեռան լանջերին գտաւ նախամարդու 12 կայան-արհեստանոց, փաստօրէն յայտնաբերուեց եւ լուսաբանուեց մարդկային պատմութեան ամենահին եւ ամենաերկարատեւ ժամանակաշրջանը: Պարզ դարձաւ, որ նախամարդը Հայաստանի տարածքում ապրել է միլիոնաւոր տարիներ առաջ, ձեւաւորուել է, անցել զարգացման բոլոր փուլերը, ընդ որում՝ անընդմէջ:

Այսպիսով, գիտութեան մէջ շրջանառուեց Հայաստանում մարդու ծագման ու անընդմէջ զարգացման իրողութիւնը:

«Պալէոլիթը Հայաստանում» գիրքը թարգմանուեց ֆրանսերէն: Ֆրանսիայի Ակադեմիան Էռնեստ Դիեզի գլխաւորութեամբ գիտա-

ՆԵՌԱՒՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՐՁԱՎԱՆՔԸ՝ ԺԱՅՈՒՊՈՒՍԿԵՐՆԵՐ



Գրիգոր Կարախանեան

կան արշաւախումբ կազմեց, որի պեղումները հաստատեցին Սարդարեանի հնագիտական յայտնագործութիւնների արդիւնքները: Հայկական Տաւրոսի եւ Ջազրոսի լեռնաշղթաների միջեւ, Շանիդար կոչուող քարայրում, պալէոլիթի երեք շերտերից բացի յայտնաբերուեցին մինչեւ 17-րդ դարը ձգուող մարդու բնակութեան շարունակական հետքեր:

Ս. Սարդարեանի յաջորդ՝ «Նախնադարեան հասարակութիւնը Հայաստանում» գրքին անդրադարձաւ բրիտանական հնագիտական մասնուրը՝ թարգմանաբար հրատարակելով որոշ գլուխներ:

Առաջաւոր Ասիայի տարածքում արդիւնաշատ պեղումներ իրականացրած ակաճաւոր հնագէտ Չարլզ Բարնեյն իր բնորոշմամբ «շնորհակալութեամբ օգտագործելով Ս. Սարդարեանի պեղումների արդիւնքները» հրատարակեց «Արարատը եւ Կովկասը. բլուր-բնակատեղիների բնակիչները» աշխատութիւնը:

1958 թւականից սկսած ողջ 25 տարի, Ս. Սարդարեանը պեղել է մ.թ.ա IV-II հազարամեակներին

պատկանող Երեւանի մասը կազմող Շենգաւիթի հնագոյն բնակատեղին, յայտնաբերել է այդ ժամանակի համար բացառիկ հնագիտական մասունքներ, որոնք զարդարում են Հայաստանի Պատմութեան պետական եւ Շենգաւիթի թանգարանները: Այդ ժամանակից ի վեր, Շենգաւիթի բնակավայրը մասնագետների շրջանում համաշխարհային հռչակ է ձեռք բերել:

Արագածի եւ Գեղամայ լեռների լանջերին սփռած ժայռապատկերների ուսումնասիրութեամբ Սարդարեանը զբաղւել է 1945-1961 եւ 1963-1982 թւականներին՝ Երեւանի պետական համալսարանում հնագիտութիւն դասաւանդելուն եւ Շենգաւիթից գատ մի շարք հնավայրերի (Կղզեակ-բլուր, Շրեշ-բլուր, Աղւեսի բներ) պեղումներին զուգընթաց:

Յայտնաբերած որոշ ժայռապատկերներ տպագրուել են հեղինակի աշխատութիւններում, իսկ «Ժայռապատկերներ» գիրքը ամփոփում է 205 մնուչ:

Երկրագնդի տարբեր մասերում սփռած ժայռապատկերները որպէս տեսալ ժամանակաշր-



ջանի մարդու նիւթական եւ հոգեւոր կեանքի արտացոլում, կարեւոր պատմական սկզբնաղբիւրներ են, քանի որ հարուստ նիւթ են տալիս վաղնջական ժամանակների կենցաղը, պաշտամունքը, սովորութիւններն ու արւեստը ուսումնասիրելիս: Սկիզբ առնելով հին քարի դարից, ընդգրկելով հազարամեակներ, տարբեր երկրներում ժայռապատկերներն ունեն կատարման տարբեր տեխնիկա՝ բազմազոյն հանքային ներկերով նկարւած են քարանձաւների պատերին, ուրւագծային պատկերներ են, հարթաքանդակներ: Հայաստանում դրանք փորագրւած են բազալտին:

«Նախնադարեան մարդու կեանքի պատմութիւնը լուսաբանելու համար ժայռապատկերները պակաս կարեւոր չեն, քան Եւրոպայի քարի դարի քարայրային պատկերները», գրում է գրքի հեղինակը:

Հայաստանի առաւել հնագոյն ժայռապատկերները պատկերում են այծեամներ, մուֆլոններ, եղջերուներ, շներ, ձիեր, գոմէշներ, գիշատիչներ: Աւելի ուշ շրջանի ժայռապատկերներում նետ-աղե-

ղով, տէգերով զինւած որսորդներ են, կանայք, թռչուններ, տարբեր տիպի սայլեր, ծածկասայլեր:

Կարեւոր է գրքի եզրայանգումը: Հեղինակը տարանջատել է նախնադարեան հասարակութեան ժամանակաշրջանի պատկերներն ըստ բովանդակութեան ու ոճական առանձնայատկութիւնների:

Առայժմ Հայաստանում գտնւած ամենահին նմուշը Ջերմուկի փղի պատկերն է: Միագիծ ժայռապատկերները (այծեր, նետ-աղեղով զինւած մարդիկ առանց շան ուղեկցութեան) պատկանում են մեզոլիթին, խորաքանդակ գծային ժայռապատկերները (բազմաֆիգուր սիւժետային նկարներ, կենդանիներ, նետ-աղեղով զինւած որսորդներ շան ուղեկցութեամբ, հողագործութեան եւ անասնապահութեան մէջ կիրառւող քաշող կենդանիներ) էնեոլիթ-պղնձի դարին:

Ժայռապատկերների փոքրաթիւ խումբը (գերազանցապէս Սիւնիքի նիւթերը) վերագրւում են մ.թ.ա. II-I հազարամեակին:

Արագածի, Սիւնիքի, Գեղամայ

լեռների ժայռապատկերները հեղինակն իրաւամբ համարում է Հայաստանի հնագոյն մարդու արւեստի հետաքրքրական դստերուններ:

Ժայռապատկերների առանձին նմուշներ Հայաստանում յայտնաբերել են աւելի քան 100 տարի առաջ, տարբեր ժամանակներում ուսումնասիրել են հնագէտների, այդ թւում տողերիս հեղինակի կողմից, գրել են գիտական աշխատութիւններ: Առաջիկայում եւս, կարծում ենք, նոր անդրադարձներ կը լինեն Հայաստանի ժայռապատկերներին:

Ս. Սարգստեանի հետեւողութեամբ շարունակւում են ժայռապատկերների նոր յայտնաբերումները եւ գիտական մանրակրկիտ ուսումնասիրութիւնները:

Աղբիւր՝ Ազգ օրաթերթ



ԼՈՐԵՏԱ ԼԱՔՍԻ ՉԱՓԱՀԱՍ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Լորետա Լաքսի լուսանկարները

րը նմանում են նկարչութեան: Դրանք համարեա բոլորը մանուկների լուսանկարներ են, որոնց ամեն բանը՝ կոմպոզիցիան, գույները եւ յետին պլանը մանրամասնօրէն մախամտածւած, ծրագրւած եւ գործադրւած են: Լաքսի

լուսանկարների սիւժէն մանուկներն են, սակայն այդ մանուկների դէմքերի արտայայտութիւնը մանկական չէ. ասես այդ մանկական մարմնի եւ դէմքի մէջ տեսնում ենք ապագայի հասուն մարդուն՝ իր հոգսերով եւ բարդ մտապատ-



կերով: Լաքսը ինքը խուսափում է մեկնաբանել թէ ինչո՞ւ է միայն լուսանկարում երեխաներին, ինչո՞ւ այսպիսի նկարչական ոճով եւ այսպիսի արտայայտություններով: Նա իր գործի մասին ասել է, որ հիմնականում նկարիչ է եղել,

սակայն չի սիրել նկարչական աշխատանքի թառած-թափուածութիւնը, եւ գերադասել է գոյների վրայ աշխատել մի լաւ համակարգիչով:

Լաքսը ծնւել է 1969 թւականին Արեւելեան Գերմանիայի Դեստեն քաղաքում: 1990-ականներին ու-

սանել է Միւնխենի կերպարուեստի ակադեմիայում: Նրա արուեստում նկատելի է Անգլիայի Վիկտորիա թագուհու շրջանի մանկական դիմանկարների, ինչպէս նաեւ 17-րդ դարի իսպանացի անւանի նկարիչ Դիեգո Վելասքեզի գործերի ազդեցութիւնը:

ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ՍՈՒՖԼԷ

Բաղադրույթին

Սուճակ	100 գրամ
միջակ սոխ	1 գլուխ
զազար	2-3 հատ
սխտոր	2 հատիկ
եփած եգիպտացորեն	3 ճ.գ.
պինդ լոլիկ	3 հատ մեծ
մանրացրած տոլմայի պղպեղ	1 բաժակ
ծու	5 հատ
քերած Գոդա պանիր	200 գրամ
սպիտակ սոուս(3 ճ.գ.ալիւրով)	50 գրամ
աղ, պղպեղ ու կարի	ըստ ճաշակի



Պատրաստման եղանակ

Բոլոր բանջարեղենները մանրացնել ու իրար հետ խառնել: Ձւի դեղնուցն ու սպիտակուցն առանձնացնել եւ առանձին այնքան հարել որ սպիտակուցը պինդ փրփուր, իսկ դեղնուցը՝ սպիտակագոյն դառնայ:

Ապա երկուսն էլ ինչպէս եւ սպիտակ սոուսը աւելացնել բանջարեղենին, եւ մի քիչ խառնելուց յետոյ լցնել պատրաստած փիռէքսի մէջ: Վերջում զանգւածը ծածկել քերած պանիրով, դնել ջեռոցի միջին մասում, եւ 180 սանտիգրադ ջերմաստիճանում 40 րոպէ եփել մինչեւ երեսը ոսկեգոյն դառնայ:

Կարելի է սուֆլէն զարդարել կանաչիով:

Բ Ա Ր Ի Ա Ն Ո Ր Ժ Ա Կ

Եռոցի կամ սրճեփի նստւածքը
